



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐՈՒ

# ՀԱՅ ԵԿԵՂ ԵՑԻՆ

(Արևազարմ «ԱՌՄԱՅ» հանգիսից)

Թ Ի Ե Ր Ի Ա

Տպարան Մ. Շարածէ եւ Բնկ. Նիկ. ՉԻ

1901

1(-9154)

76



281.6  
9-76

154

ՀՈՐՐՈՐԴ ԴԱՐՈՒ

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

(Արասպած „Լ. ՈՒՄԱ. Յ.“ կանգնից)



Թ Ի Ե Լ Ի Ս

Տպարան Մ. Շարածէ և Լսկ., Նիկ. 21.

1901




515  
38



10 FEB 2014

8252



**ՉՈՐՐՈՐԿ ԴԱՐՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ**

**Տ. Ս. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՊԱՐԹԵԻ**

**1. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ**

Дозволено цензурою, Тифлисъ, 15-го Декабря 1900 года.



Քրիստակէս Լուսաւորչի և Մարիամու կրօսեր որդին է: Իւր ծննդեան թուականը գրինք արգէն 364-ին, և ըսինք ևս թէ իւր հօր մեկնելէն յետոյ մնաց մօրը խնամքին ներքև և անոր հետ վանք տուանձնացաւ և ապահով ապաստանարան գտաւ: Մօրը հետ մնաց

մինչև արբունք հասնելը, այսինքն շուրջ 15 տարեկան լինելը, և յետոյ աշակերտեցաւ Նիկոմաքոս անուն ճըզնաւորի մը. և երբ աշակերտութիւնը վերջացաւ, իրեն համար առանձին ճգնարան ունեցաւ և շուրջը աշակերտներ հաւաքեց: Ի հարկէ այդ ամենը կեսարիոյ ջրջակայից մէջ կատարուեցաւ:

Արիստակէսի վրայ ուրիշ տեղեկութիւն չունիմք

26 15-38



մինչև այն ատեն, որ Տրդատայ հրաւերով Հայաստան եկաւ և եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և իւր հօր օգնական եղաւ: Այս պարագայն ալ արդէն 306 թուականին կատարուած հաշուեցինք, Արիստակէսի 42 տարեկան եղած ատեն: Որովհետև Արիստակէս լոկ անպատաւոր և միայնաւոր կը ճանչցուի, ուստի պէտք է ըսել թէ Կեսարիա եղած ատեն եկեղեցականութեան մտած չէր, և քահանայութիւնն ու եպիսկոպոսութիւնն ալ հաւասարապէս իւր հօրմէն ստացաւ: Այն ժամանակ արեղայութիւնը լոկ կրօնաւորութիւն էր առանց եկեղեցական աստիճանի:

Իւր հօր կենդանութեան ժամանակ Արիստակէս ամենայն ինչ եղած է, զի Լուսաւորչի տկարութեան և առանձնասիրութեան պատճառաւ բոլոր հովուական հոգեր որդուցն վրայ ծանրացած էին. այսու հանգերձ մասնաւոր կերպով պատմուած պարագաներ չունիմք. իբր զի ամենայն ինչ Լուսաւորչի անունով կը գործուէր: Այլ թէ ոչ պէտք է ճանչնալ թէ այն ժամանակի հաւատոյ կանոններ, բարեկարգութեան սահմաններ և բարոյական ուղղութիւններ՝ բոլորն ալ Արիստակէսի աշխատութեամբ հաստատուած են մեր եկեղեցուցն մէջ:

Արիստակէսի նկարագրին իբր գլխաւոր գիծեր պէտք է նկատել արտաքին ճգնաւորական կերպարան՝ անշուք և անփառունակ, զծուծ և ծաղրելի երևնալու չափ ոմանց աչքին. իսկ ներսէն նախանձախնդիր և խիստ հոգի՝ առանց աչտառանց և առանց երկիւղի. ճշմարտութեան և բարեկարգութեան խստապահանջ պաշտպան. զեղծումներու և զեղծեալներու դատապարտող և լանդիմանող:

Արիստակէսի կեանքին և մեր եկեղեցուցն պատմութեան համար նշանաւոր կէտ մ'է Նիկիոյ ժողովոյն մէջ նորա ներկայութիւնը: Մեզի հասած ժողովական հարց

ցուցակներուն մէջ ևս կը յիշուի Հայոց Մեծաց աշխարհէն սուրբ հայր մը. թէպէտ անունը ցուցակներու մէջ այլալաճ երևնայ, այսինքն Արիստակէսը՝ Արիստարկէս կամ Արիստեկիսոս եղած: Ըստ մեզ նոյն ինքն Արիստակէսն է նաև ուրիշ ցուցակի մը մէջ նշանակուած Արսափիոս Ծոփաց եպիսկոպոսը, զի նոյն ցուցակը Մեծ Հայքէն ուրիշ անուն չյիշեր: Անուններու աղաւաղումը գրչագիրներու մէջ ստէպ հանդիպած մի բան է:

Թէպէտ Արիստակէս Մեծ Հայոց աշխարհէն կ'ըսուի, այլ ուղղակի Մեծ Հայոց եպիսկոպոս չկոչուիր, և ոչ ալ Մեծ Հայոց եպիսկոպոս Գրիգորի փոխանորդ կը կոչուի: Թէպէտ ուրեք Իեսոպոնտոսի և ուրեք Թրենիոյ եպիսկոպոս կոչուած է, այլ ասոնք լետ և յառաջ անուններու հետ տեղի ունեցած պարզ շփոթութիւններ են, և ընտրեյագոյն է Ծոփաց եպիսկոպոսի կոչումը զոր ուրիշ օրինակներ կուտան: Արիստակէսի Ծոփաց մէջ սպանուիլը, Ծոփաց մէջ ստէպ շրջելը, Ծոփաց մէջ Խոզանի (այժմ Խոզաթ) եկեղեցին շինելը (Ասողիկ. եր. 64), իրաւունք կուտան հետեցնելու թէ Ծոփաց աշխարհը Արիստակէսի նախնական և սեփական վիճակը եղած էր: Ծոփաց աշխարհին կարևորութիւնն ալ այդ մեկնութիւնը կ'արգարացնէ:

Արիստակէսի Նիկիոյ ժողովին երթալուն յարակից պարագաներէն յիշենք նախ, թէ Պարսից Յովհաննէս և Մճբնայ Յակոբ և Եդեսիոյ Եւթաղ եպիսկոպոսները ուղեկից ունեցաւ մինչև Կեսարիա, թէ Գրիգոր Աստուածաբանի հօր Գրիգորի մկրտուելուն ներկայ եղաւ քի Նազիանզ Առնոբիոսի հետ, թէ Կեսարիայէ անդին Կեսարիոյ Առնոբիս եպիսկոպոս ևս ուղեկից ունեցաւ: Կը պատմուի ևս թէ Նիկիոյ լիճին եզերքը Արիանոս տեղացիներ սկսան Արիստակէսը ծաղրել իւր անփառունակ կերպարանքին համար իբր սոսկական մշակ մը



նախատելով զնա, և թէ Արիստակէս եզներով լծուած արօր մը համարձակ լինին վրայ տարաւ և ջուրը հերկելով անվտանգ գուրս ելաւ:

ժողովական գործողութեանց մէջ Արիստակէսի յատուկ յիշատակութիւն մը չունիմք, միայն թէ իբրև Էուսաւորչի զուակ և իբրև առաքելանման հովիւ Կոստանդիանոս կայսեր և բոլոր եպիսկոպոսակից հայրերու կողմէն ընդհանուր յարգանաց առարկայ եղած լինելը պատմուած է:

2. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ

ժողովէն դառնալէն ետքը Արիստակէս իրապէս և պաշտօնապէս հայրապետական աթոռը ստանձնեց, վասն զի նոյն միջոցին վախճանեցաւ Ս. Լուսաւորիչը, ինչպէս պատմութեանս առաջին մասին մէջ բացատրեցինք և ճշգրեցինք: Ասողիկ կ'ենթադրէ թէ այդ առթիւ Արիստակէս Կեսարիա գացած լինի ձեռնադրութեան համար (եր. 63): Սակայն Սկզբնական պատմութիւններ, և ոչ իսկ Բիւզանդը, այսպիսի բան մը չեն պատմեր: Արիստակէս եպիսկոպոսական ձեռնադրութիւն ունէր, և Նիկիոյ ժողովին ներկայ եղած էր իբր եպիսկոպոս, և հայրապետական պաշտօնն ալ արդեամբ կը վարէր, ուրեմն առանց նոր ընտրութեան անզգալի կերպով մը Աթոռին բուն տէրը դարձաւ: Ձեռնադրութիւնը եպիսկոպոսական աստիճանին համար պէտք էր, և եպիսկոպոսութենէ հայրապետութեան անցնիլը ըստ հին սովորութեան նոր ձեռնադրութիւն չէր պահանջեր: Հետեւաբար Արիստակէսի Կեսարիա երթալը ընդունելի չէ կարող լինել:

Արիստակէսի հայրապետութեան տևողութիւնը 7 տարի ըսուած է Խորենացիէն (եր. 378) և մեք հարկ

չեմք տեսներ այդ տևողութիւնը փոփոխել: Միայն թէ ոչ ևս կարող եմք այդ եօթնամեայն սկսել 333 էն, ինչպէս կ'ընէր հին հաշիւը, այլ 326 էն սկսելով կը լրացնեմք 333 ին: Առ այս բաւական լինին որչափ ինչ Էուսաւորչի մահուան վրայ գրեցինք:

Այդ թուականներու փոփոխութեան պատճառով պէտք է Արիստակէսի ժամանակ դնել Տրդատայ մահը և Խոսրովու յաջորդելը, որք տեղի ունեցան 330 ին: Խորենացին այդ պարագայն Վրթանէսի կուտայ (Բ. եր. 10), բայց Բիւզանդ Վրթանէսի հայրապետութիւնը Խոսրովու թագաւորելէն չետոյ կը դնէ (եր. 6.), պատմական ուրիշ դիպուածներ հակառակութիւն չեն կրեր, և թղթակցական յարաբերութիւնք աւելի զիւրութեամբ կրնային կատարուիլ Արիստակէսէ, որ Կոստանդիանոսը անձամբ ճանչցած էր Նիկիոյ ժողովին առթիւ: Թէպէտ և Խորենացին Կոստանդի կը վերագրէ Խոսրովի հաստատութիւնը, այլ Կոստանդիանոս 337 ին մեռած լինելով, անհնար է մինչև այն ատեն հասցնել Տրդատայ մահը, որ այդ ենթադրութեամբ 100 տարեկան մեռած պիտի ըսուէր: Հաստատութիւնը Կոստանդիանոսի ժամանակ ընդունուած ատեն, ինչպէս ընդունած է և Արծրունին (եր. 58); աւելի յարմար է միջնորդի դերը Արիստակէսի տալ, Կոստանդիանոսի հետ անձնական ծանօթութեան համար, ինչպէս արդէն զիտել տուինք:

Պատմութիւնը շատ աղքատ է Արիստակէսի հայրապետական գործունէութեան մանրամասնութեանց նրկատմամբ, և մեք չեմք կարող ենթադրական պարագաներով զարդարել զայն: Գլխաւոր պարագայն իւր նախննաձայնը ընթացքն է: Արքունիքը, աւագանին և երկրին բարձրագոյն դասակարգը չկրցաւ իսկոյն հրաժեշտ տալ հին հեթանոսական սովորութեանց, և նախկին զեղծումները կուզէր նոր դաւանութեան պատուաստել: Արիս-



տակէս տղայութենէ քրիստոնեայ, սննդեամբ ճգնաւոր և խստակրօն սկզբանց տէր, չէր կարող անտարբեր մնալ: Նոյն ինքն Տրդատ չէր կարողացած ներել. և ոչ իսկ արքունեական ազդեցութեամբ քրիստոնէական բարեկարգութիւնը զօրացնել, և նահատակ եղած էր իւր բարեկրօն սկզբանց:

Արիստակէս ալ նոյն վախճանը ունեցաւ և բռնական մահուամբ կեանքը վերջացուց: Իրաւ անհատական դաւաճանութեան զօհ եղաւ, բայց ոչ նուազ ստույգ է թէ զօհ եղաւ իւր նախանձայնող եռանդին: Արիստակէս կը գտնուէր Ծովաց երկիրը, ուր բռնաշխ էր Արքեղայոս, այն նախարարներէն մին, որք աւելի հրաւիրած էին վրանին սրբոյն կշտամբանքները: Պէտք է ենթադրել թէ լոկ կշտամբանքէ աւելի բան մը ըրած ըլլալու է Արիստակէս, թերևս բանադրանքի կամ նզովքի սաստն ալ գործադրեց, որ Արքեղայոսի արիւնախանձ վրէժխնդրութեան հանդիպեցաւ: Խորենացին կը գրէ. «Պատահեալ ի ճանապարհի սպան զնա սրով» (եր. 378), իսկ Բուզանդ Արիստակէսի խոստովանողական մահը կը յիշատակէ (եր. 6).

Արիստակէս թաղուեցաւ Եկեղեցաց գաւառի Թիլ գիւղը: Չեմք գիտեր թէ Ծովաց որ կողմը պատահեցաւ սպանութիւնը, և հետեւեալ չեմք կարող ճշդել թէ մօտաւոր կամ հեռաւոր տեղէ մը բերուեցաւ մարմինը: Թիլ բերուելուն պատճառը կուտայ Բիւզանդ կոչելով զայն «կալուած Գրիգորի հօրն իւրոյ» (եր. 6): Թիլի գերեզմանը մեզի փաստ կը լինի ըսելու թէ դեռ չըկայր Լուսաւորչի գերեզմանը ի Թորդան, թէ ոչ այնտեղ թաղուած կը լինէր Արիստակէսն ալ: Անտէր և ամալի վանք մ'է այսօր Արիստակէսի գերեզմանը Երզրնկայի դաշտին մէջ Թիլ գիւղի մօտ, Զուխտակ Հայրապետ անունով ճանչցուած:

Արիստակէսի ծնունդը եղած էր ի Կեսարիա, հաւանաբար 264 ին, իւր Հայաստան գալը դրինք 306 ին, ելք 42 տարեկան էր, որ կը լինի նաև իւր եպիսկոպոսանալուն ալ թուականը: Լուսաւորչի մահուանէ յետոյ Հայրապետ հռչակուելը դրինք 325 ին վերջը 62 տարեկան եղած ատեն, խոստովանողական մահն ալ տեղի ունեցաւ 333 ին 69 տարեկան եղած ատեն:

Արիստակէսը կուսակրօն էր, և Լուսաւորչի սերունդը միակ զիծով շարունակեց Վրթանէսի կողմանէ, որովհետև այս երկուքէն զատ ուրիշ զաւակ չիշէր պատմութիւնը:

### Տ. Ս. ՎՐԹԱՆԷՍ ՊԱՐԹԵՒ

#### 3. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ

Վրթանէսի նախընթաց կեանքին վրայ ունեցած տեղեկութիւննիս Արիստակէսէ աւելի չէ: Ծնունդը եղաւ Կեսարիա 261 ին. և իւր հօր մեկնելէն յետոյ մնաց աշխարհական վիճակի մէջ, և ամուսնացաւ, հարկաւ 280 թուականէ ետքը: Բուզանդ կը պատմէ թէ երկար ատեն անորդի մնաց, և «ի ծերութեան» աղօթքի զօրութեամբ երկուորեակ զաւակներու տէր եղաւ (եր. 10): Ծերութեան տարիքը պէտք չէ բառացի կերպով իմանալ, զի այնուհետև դժուարին կը լինէր իւր սերնդոց հաշիւը գտնել, և մինչև Սահակ, որ 350 ին ատենները պէտք է ծնած լինի, չորս ծնունդներու համար գոնէ 70 տարուան միջոց գետեղել: Հետեւեալ բաւական կը սեպեմք ըսել թէ իբր 15 տարի անորդի մնաց Վրթանէս և 295 ին ունեցաւ Գրիգորիս և Յուսիկ երկուորեակ զաւակներ:

Վրթանէսի զբաղանքն ևս մեզի անյայտ մնացած



է: Ոմանք կարծեցին թէ Կեսարիոյ մէջ քահանայութեան կոչուած ըլլալ, այլ մեք կը կարծեմք թէ Վրթանէսի տրուած նրէց բառէն ծագած է այդ շփոթութիւնը. և այն որ անդրանիկ լինելը բացատրելու համար տրուած է, քահանայ իմաստով առնուած է: Եւ ոչ մի պատմական հանգամանք չնպաստեր Վրթանէսը Կեսարիոյ մէջ քահանայ եղած ենթադրելու:

Հայաստան զայլ Արիստակէսի հետ միատեղ եղաւ. և եթէ Արիստակէս կրօնաւորական կեանքին համար նախարատուուեցաւ և առաջ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, Վրթանէս ալ եկեղեցականութեան մտած է իւր հօր ձեռնադրութեամբ, թէպէտ աւելի ուշ: Միւս կողմանէ անհր-նարին է չտեսնել Վրթանէսի կեանքին մէջ քաղաքական գործերու հետ ունեցած յարաբերութիւնները, որ հետեանք է անշուշտ իւր ընդունակութեան, այլ և փորձառութեան: Հետեաբար մեզի համար շատ պարզ է որ Վրթանէս եկեղեցականութեան մտնելէ առաջ և յետոյ, պետական և քաղաքական գործառնութեանց մէջ պաշտօնական դեր ունեցած է:

Սակայն Վրթանէսի գործունէութեան յիշատակութիւնը կը սկսի իւր եղբոր մահուանէ ետքը: Երբ Արիստակէս նահատակուեցաւ, ոչ միայն Լուսաւորչի գաւառներուն սէրը, այլ և Վրթանէսի անձնական արժանեաց հաւաստիքը համոզեցին բոլոր ազգը որ Վրթանէս կաթողիկոս հռչակուի 333 ին 72 տարեկան հասակին մէջ Խոսրով Կոստակի թագաւորութեան երրորդ տարին:

4. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Ամեն պատմագիրներ կը լռեն Վրթանէսի ձեռնադրութեան պարագայն և ուր նոքա կը լռեն, աւելորդ է ենթադրական պարագաներ ստեղծել. ուստի պէտք է

ընդունել թէ Վրթանէս Կեսարիա գացած չէ ձեռնադրութեան համար: Նշանաւոր է մանաւանդ Բուզանդի լուսթիւնը (եր. 6), որ ուրիշ առիթներու մէջ ամենայն փութաջանութեամբ կաշխատի Կեսարիոյ աթոռին գանազան պատիւներ և իրաւունքներ վերագրել: Չերթալուն պատճառն ալ լայտնի է, զի Վրթանէս, եթէ ոչ առաջ, զոնէ Լուսաւորչայ վերջին ժամանակին և Արիստակէսի Նիկիա երթալուն առթիւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն պէտք է առած լինի:

Կրնայ ընդունուիլ թէ առանց Կեսարիա երթալու, Վրթանէսի կաթողիկոս լինելուն առթիւ Կեսարիոյ աթոռուն դիմում եղած լինի: Այդպիսի յարաբերութիւնք սովորական էին հին ժամանակները մեծ աթոռներու մէջ, որոց աթոռակալներ իրենց ընտրութենէ յետոյ դիմացէ դիմաց սիրոյ և հաղորդութեան գիրեր կը փոխանակէին, իրենց գաւանութիւնն ալ բացազրելով, իբրև հիմն քրիստոնէական սիրոյ և հոգևոր հաղորդութեան: Բայց այդ յարաբերութիւնք բնաւ իշխանութեան նշանակութիւն չունէին և ոչ իրարու վրայ տիրապետութիւն կը ցուցնէին:

Վրթանէսի հայրապետութեան առաջին օրերը կըրնան խաղաղական կոչուիլ, թէպէտ երկարտև եղած չլինին: Խոսրովու և Վրթանէսի ժամանակ երկրին մէջ տիրող երանաւէտ խաղաղութեան և աշխարհաշէն ձեռնարկութեանց վրայ Բուզանդի գրածը (եր. 7), այդ միջոցին կը պատկանի, վասն զի քիչ ետքը երկիրը սկսաւ նեղուիլ ներքին ապստամբութիւններով, որոնց անմիջապէս յաջորդեցին պարսկական պատերազմներ, որք սկսան 337-ին, Կոստանդիանոսի մահուան տարին, և 297-ին գաշնադրեալ քառասնամեայ խաղաղութեան աւարտելուն առթիւ:

Այդ շփոթութեանց մէջ Վրթանէս ալ Խոսրովի



Տեա յոգնեցաւ և աշխատեցաւ և խաղաղութիւն վերահաստատելու ջանքերուն գործակցեցաւ: Իւր անունը լիշուած կը տեսնեմք Որդունեաց և Մանաւազեանց եղբայրասպան կռուոյն մէջ (Բուգ. 9.), Սանատրուկի կամ Սանեսանի նուաճման մէջ (Բուգ. 17), Բզնունի Գատաբենի ապստամբութեան առթիւ (Բուգ. 19), Ռշտունի Մանաճիւրհի տարապարտ վրէժխնդրութեան խնդրոյն մէջ (Խոր. 16), ևս և Պարսիկներու դէմ եղած պատերազմներուն մէջ (Բուգ. 26), այնպէս որ անհակառակ կարող եմք ըսել, թէ Վրթանէս աշխարհավար արդիւնքներով ալ պայծառացաւ ոչ նուազ քան եկեղեցական աշխատութիւններով:

Այդ տեսութեամբ իրարմէ կարի տարբեր են Ս. Լուսաւորչի երկու զաւակները. և գուցէ այդ տարբերութեան հետեանք է որ պատմութիւնն ալ անխտիր ամեն քաղաքական գործունէութիւն Վրթանէսի կը վերադրէ, առանց ի նկատ առնելու ժամանակագրական պահանջները: Արդէն լիշեցինք թէ ինչպէս Խոսրովութագաւորելուն համար հայրապետական միջամտութիւնը ժամանակագրական կարգով Արիստակէսի կը պատկանի, մինչ Խորենացին զայն Վրթանէսի կուտայ, թէպէտ միւս կողմանէ Բուզանդ Վրթանէսի հայրապետութիւնը Խոսրովութագաւորելէն յետոյ կ'դնէ:

Կը կարծեմք թէ պատմական ստուգութիւն մը հաստատած կը լինիմք եթէ ըսեմք, թէ կանուխէն ալ Վրթանէս պետական և վարչական պաշտօններով զբաղած էր արքունիքին մէջ: Արդէն իւր զաւակներէն Յուսիկ, իւր թոռները Պապ և Սթանազինէ, և իւր թոռնորդին Ներոէս, պալատական և զինուորական զբաղմանց հետեւած են, միայն Գրիգորիս կայ Արիստակէսի կրօնաւորութեան հետևող: Այդ տեսութեան կը նպաստէ անշուշտ Լուսաւորչի արքայազարմ տունէն

լինելը, և նոյն իսկ Լուսաւորչի պալատական զբաղմանց կեանքն անցնելը:

Վրթանէսի եկեղեցական հոգատարութեանց մէջ լիշատակութեան արժանի է Մակար Երուսաղեմայ հայրապետին հետ յարաբերութիւնը. և ինչ ինչ խնդրոց համար նմին ուղղած հարցումները, և Մակարի պատասխանները, որք «Կանոնք Մակարայ» անուամբ և 9 գլուխներու բաժնուելով կանոնագիրքին մէջ անցած են Օձնեցուոյն ձեռօք (Կան. եր. 80): Մակար Երուսաղեմացին 314-ին ամբողջ բարձրացած և 334 ին մեռած լինելով, այդ թուականն ալ կը պարտաւորէ զմեզ մինչև 340 շտանել Վրթանէսի կաթողիկոսութեան սկիզբը, ինչպէս կընէ հին հաշիւը: Վրթանէս Մակարի հետ թղթակցած լինելու համար, պէտք է գոնէ 333-ին հայրապետութեան ամբողջ նստած լինի, ինչպէս որ մեք ևս զրինք:

Գեղեցիկ լիշատակ մը ևս ունիմք Բուզանդէ պահուած: Պարսից պատերազմին մէջ բաւական մեծ կորուստներ տուեր էին Հայոց աւագանին և բանակը. Վաչէ Մամիկոնեան սպարապետն ալ կ'ուռուցնէ մէջ մեռած էր և մեծ սուգ կար երկրին մէջ: Վրթանէս սկսաւ ժողովուրդը մխիթարել հոգևոր խրատներով. նկատել տուաւ թէ Պարսից նպատակն էր յաղթութենէ յետոյ իրենց կրօնքին բռնադատել Հայերը, ուստի պատերազմին մէջ մեռնողներ եկեղեցույ և հաւատոյ համար արիւն թափած են. և «Ընդ վկայս Քրիստոսի է նոցա համար պատուոյ»: Այդ պատճառով «Եդ օրէնս ընդ աշխարհն՝ մեծ քահանայապետն Վրթանէս զնոցա առնել լիշատակ ամ յամէ, և որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա, եդ կանոն լիշել զսոսա առ սուրբ սեղանն Աստուծոյ ի ժամ պատարագին, յորժամ զանուանս սրբոցն կարգի-



ցեն, և ապա զկնի նոցա զնոցայն (Եր. 26—28): Վա-  
չէեանց տօնը այժմ չկայ, այլ յետագայ նմանօրինակ  
յիշատակելոց հետ միացած և այժմեան Վարդանանց  
տօնը եղած է, և այդ տօնին տրուած ազգային տօն  
կամ ազգային յիշատակ կոչումը այս կերպով իւր ար-  
դարացումը կը գտնէ:

#### 5. ՎԵՐՁԻՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ՄԱՀ

Քաղաքական դէպքերու շարքը կազմել մեր նիւ-  
թէն դուրս է, և միայն եկեղեցական պատմութեան  
յարակից մասերը քաղելով կը բաւականանամք: Ընդհա-  
նուր խռովութիւնը սկսած էր երկրին մէջ զլիսաւորա-  
պէս երկու ապստամբ բոլորներուն երեսէն, Փայտա-  
կարանի Սանատրուկը կամ Սանեսանը հիւսիսէն, և  
Աղձնեաց Բակուրը հարաւէն: Ատոնց ետեւէն Պարսից  
բանակն ալ ներս մտաւ, և Գատաբեն Բզնունի սպա-  
րապետն ալ անոնց կողմն անցաւ: Այդ էր երկրին վի-  
ճակը 337-ին: Խոսրով փոփոխ բազմով մրցեցաւ անոնց  
հետ Վրթանէսի խորհրդակցութեամբ, և Վաչէ Մամի-  
կոնեան, Վահան Ամատունի, Մանածիհր Ռշտունի,  
Արշաւիր Կամսարական և Անդովիկ Սիւնի զօրավարնե-  
րուն ձեռքով: Խոսրով ունեցաւ մասնաւոր յաղթութիւն-  
ներ, այլ չկրցաւ երկիրը խաղաղացնել և 339 ին մեռաւ  
յոյժ դժուար կացութիւն մը թողլով իւր որդւոյն և շա-  
ջորդին: Առանց ուզելու վճառքար ճշդել թէ Սանատ-  
րուկի և Բակուրի և Գատաբենի մահերը ինչ ազդեցու-  
թիւն ըրին ընդհանուր կացութեան վրայ, կը բաւա-  
կանանամք զիտել տալ թէ ներքին ապստամբութիւն-  
ներ և Պարսից յարձակումներ թող չտուին Տիրանի իւր  
իշխանութիւնը հաստատել, մինչև որ վերջիվերջոյ  
ստիպուեցաւ երկիրն ալ թողուլ և Յունաստան ապա-  
ւինել:

Այդ միջոցին պէտք է դնել Վրթանէսի կեանքին  
դէմ դաւաճանութիւնը, որ հաւանաբար Խոսրովու վեր-  
ջին տարին տեղի ունեցած է: Վրթանէս կը գտնուէր  
Տարոն աշխարհախումբ տօնը կատարելու, որ քրիստո-  
նէական ձև առած և յաջորդած էր հին հեթանոսա-  
կան տօնին, և կաթողիկոսն ալ անձամբ ներկայ կը  
գտնուէր (Բուզ. 7): Երկու հազարի չափ լեռնականներ  
«ի բնակչաց Սիմ լերին» (Սոփ. 52), «ի սաղբելոյ նա-  
խարարաց» (Խոր. 4), կուգէին Վրթանէսի կեանքը դա-  
ւաճանել, այլ հրաշալի կերպով արգելուեցան, և Վրթ-  
թանէս անվտանգ անցաւ և գնաց Թիլ իւր կալուածը  
և եղբօրը գերեզմանատեղին: Ըստ Բուզանդայ «Սեծի  
Հայոց տիկնոջն» (Բուզ. 8) մատը եղած է այդ դաւա-  
ճանութեան մէջ, այլ դժուարին է ենթադրել որ Խոս-  
րովու և Վրթանէսի սերտ կապակցութեան միջոցին  
այսպիսի մի դաւաճանութիւն գործէ թագուհին: Պէտք  
է ուրեմն ըսել թէ՛ Աղձնեաց ապստամբ բոլորներն  
է ինքզինքը Հայոց Տիկին կոչել տալու և Ս. Հայրա-  
պետին դէմ ելնելու յաւակնութիւնն ունեցող դաւա-  
ճան կինը:

Խոսրովու որդւոյն Տիրանին վիճակը ևս քանզևս  
կը դժուարանայր ինչպէս վերև կըսէինք. Տերունին  
Մապուհ նոյն իսկ իւր Ներսէհ որդին զրկած էր զօ-  
րաւոր բանակով Հայոց աշխարհն ու թագը գրաւելու,  
և այս պատճառով Տիրան Կոստանդնուպոլիս փախչելու  
ստիպուեցաւ: Վրթանէս ևս, որ յունասէր կուսակցու-  
թեան պետերէն մէկն էր, գուցէ և զլիսաւոր դրդիչը  
սեպուած էր. պարտաւորեցաւ թագաւորին հետ ինքն  
ալ մեկնիլ, թէ վտանգէ խոյս տալու և թէ օգնութիւն  
փութացնելու նպատակով:

Տիրանի Կ. Պոլիս երթալը կը պատմէ Խորենացին  
(Եր. 22), և անուղղակի կը հաստատուի այն Յուլիա-



նոս Կեսարին Կոստանդ կայսեր առջև խօսած ճառէն, ուր Հայոց իշխանին կամ թագաւորին փախչելը կը լիշուի առանց անունը տրուելու, և կըսուի ևս թէ պարսկական կուսակցութեան զօրութենէն ստիպուած էր նա փախչել. և թէ կուսակցութեան շահուելովը և կայսեր օգնութեամբը Հայոց թագաւորը կըրցաւ վերստին իւր գահը գրաւել խաղաղութեամբ (Գաթրճեան Բ. 463): Խորենացիին և Յուլիանոսին պատմածները զիրար կը լրացնեն և կը կենդրոնանան Տիրանի վրայ, և հնար չէ ուրիշ կերպով բացազրել այսպիսի նշանաւոր դիպուած մը:

Տիրանի և Վրթանէսի բացակայութեան ատեն, թագաւորութեան խնամակալն էր Արշաւիր Կամսարական որ Պարսից վրայ յաղթութիւն ալ տարաւ. այլ հայրապետութեան տեղապահը յայտնի չէ, գուցէ եղաւ Փառէն Աշտիշատի մայր եկեղեցւոյն եպիսկոպոսը որ յետոյ կաթողիկոսութեան ալ բարձրացաւ: Ամեն առթի մէջ այդ միջոցը երկար չեղաւ, զի Արշաւիրի յաղթութեամբ, և պարսկական կուսակցութեան տկարանալով և Կոստանդի պաշտպանութեամբ երկիրը հանդարտեցաւ և Վրթանէս և Տիրան իրենց աթոռները դարձան:

Վրթանէս ծերացեալ հասակին մէջ այդ տազնապներն ալ կրելէ և այդ յաջողութիւնը գլուխ հանելէ ետքը, այլ ևս երկար չապրեցաւ և հանգեաւ խաղաղութեամբ «յերրորդ ամին Տիրանայ» (Խոր. 24), այսինքն 341 ին: Խորենացի 15 տարի կուտայ Վրթանէսի նպիսկոպոսութեան, և ամեն պատմիչներ 15 տարի տուած են Վրթանէսի կաթողիկոսութեան: Ըստ մեզ կարի երկարաձիգ է Վրթանէսի պաշտօնավարութեան 15 տարի տալ Արիստակէսի մահուանէ հաշուելով, ուստի աւելի յարմար կը սեպեմք ճիշդ իմաստով առնուլ եպիսկոպոսութիւնը Լուսաւորչի վերջին տարիէն, որով

7 տարի Արիստակէսի տրուած ատեն, 8 տարի միայն կը մնայ Վրթանէսի 333 էն 341: Որդւոց և թոռանց ներբողաբանն ալ կըսէ թէ Վրթանէս կը մեռնէր «վաղազոյն հրաժեշտ խնդրելով յախտալի կենացս» (Սոփ. 18), որ գոնէ հայրապետութեան երկար չլինելը կը ցուցնէ:

Այս հաշուոյն համար իբր հիմնակէտ կուգեմք պահել Վրթանէսի մահուան թուականը Տիրանի երրորդ տարին ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն: Այս ժամանակագրութիւնը թէպէտ կը մեղանչէ ընդհանուր առման մէջ, այլ կաթողիկոսներու և թագաւորներու մէջ համապատշաճ չափակցութիւն մը կը պահէ, այնպէս որ այս համեմատական կշիռը պէտք չէ եղծել և ուր ժամանակագրական պահանջներ հակառակը չեն ցուցներ, բողոքատական կէտերը կրնան գործածուիլ իբր ուղղութեանց հիմ. և ահա այս կարգէն է Վրթանէսի և Տիրանի թուականներու համեմատութիւնը:

Միւս կողմէն Վրթանէսի տարիքն ալ արդէն լեցուն էր հայրապետութեան հասած ատենը, այսինքն 72 տարեկան էր, և այս տարիքին վրայ 15 ևս դրուած տակներ ոչ միայն կշիռը կը կորսնցնեմք, այլ և դժուարաւ կրնամք 87 տարեկան ծերունւոյն պատշաճեցնել Վրթանէսի գործունեայ կեանքը, որ չունի իսկ իւր վերջերը այն հանդարտ անգործութեան միջոցը, զոր ունեցաւ Լուսաւորիչը, այլ մինչև իւր վերջին շունչը միշտ շարժման և գործունէութեան մէջ կը գտնուի, ոչ միայն եկեղեցական այլ և քաղաքական և նոյն իսկ պատերազմական ճգանց մէջ: 80 տարեկան հասակը զոր կունենայ մեր հաշուով 341 ին վախճանած ատեն շատ է, քիչ չէ իւր պատմութեան համեմատութեամբ:

Վրթանէս թաղուեցաւ ի Թորգան, Գառանաղի գաւառին մէջ ըստ միաբան վկայութեան Խորենացւոյ (եր. 24), և Բուզանդայ (եր. 29), միայն թէ մինչ Խոր





բենացին մարգարէական մեկնութիւն մը կուտայ այն տեղ թաղուելուն, ուր յետոյ Լուսաւորչի ոսկերք պիտի ամփոփուէին, Բուզանդ պատմական ոճով և յայտնապէս կըսէ թէ «անդ առ մեծի հայրապետին Գրիգորի զսորա սուրբ զոսկերսն հանգուցանէին»: Ս. Լուսաւորչի նշխարաց գիւտին վրայ խօսած ատեննիս յստակ կերպով բացատրեցինք և հաստատեցինք, թէ այդ գիւտը տեղի ունեցաւ Վրթանէսի կենդանութեան ատեն, և պէտք չէ երբէք յետաձգել զայն մինչև դար մը անդին: Իրօք ալ Որդւոց և թողանց պատմութիւնը Վրթանէսի կաթողիկոսութեան հետ կը խառնէ Ս. Լուսաւորչի նշխարաց գիւտի պարագայն՝ (Սոփ. 51):

#### 6. Ս. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այստեղ պէտք է դնեմք Վրթանէսի որդւոյն Գրիգորիսի պատմութիւնը: Գրիգորիս երկուորեակներուն երիցագոյնն է. և այս պատճառով պապին անունը ժառանգած է փոքրացուցիչ մասնիկով: Ծնունդը զրինք 295 ին Կեսարիոյ մէջ, և Հայաստան գալը 306 ին մօրը և հօրեղբօրը հետ 11 տարեկան հասակին մէջ:

Իսկզբան երկու եղբայրներ «սնան զառաջեալ թագաւորին Հայոց և ուսման գրոց փոյթ ի վերայ կալան ուսուցանել զնոսա» (Բուզ. 10): Այլ յետոյ կերևի թէ Գրիգորիս աւելի Արիստակէսի հետ կապուեցաւ և նորա կրօնաւորական կեանքին աշակերտեցաւ: Աղուանք իրենց դարձին ատեն ըստ Խորենացւոյն (Եր. 6) Լուսաւորչի արիւնէն հովիւ մը ուզեցին և կրօնաւորութեան յարմարագոյն անձը նկատուեցաւ Գրիգորիս, թէպէտ տակաւին մասնկահասակ: Բուզանդ 15 տարեկան եպիսկոպոս ձեռնադրուեցաւ կըսէ (Եր. 10), սակայն մեր հաշուով Աղուանից դարձը 316-ին տեղի ունեցած

վնեցով կամ թերևս աւելի ալ ուշ, Գրիգորիս առ նուազն 21 տարեկան եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացած կը լինի:

Գրիգորիս թէպէտ մանկահասակ, այլ առաքինութեամբ մեծ, կրցաւ մեծամեծ օգուտներ գործել քրիստոնէութիւնը տարածելու Հայոց յարակից նահանգներու մէջ: Թէպէտ յատուկ Աղուանից կաթողիկոսի անունով կը լինուի, այլ և Վիրք իւր սահմաններուն մէջ էին այն ատեն, և իւր քարոզութիւնները տարածեց նա մինչև Ատրպատականի կողմերը (Բուզ. 13), և հիւսիսային կողմէն սկսաւ աւետարանել Մազքութներու կովկասաբնակ ցեղերը: Գրիգորիսի աշխատութեան ժամանակը 20 տարիէ աւելի եղաւ, զի իւր նահատակութիւնը 337 է յառաջ բերելու բնաւ հարկ մը չկայ:

Երբ Գրիգորիս հիւսիսային գաւառները յղուեցաւ Տրդատ այն կողմերու բզեաշխ կարգեց Սանատրուկ Արշակունին (Խոր. 6), կամ Սանեսան Արշակունին (Բուզ. 14), որպէս զի ծաղկահասակ եպիսկոպոսին պաշտպան լինի, և երևի թէ Սանատրուկ մեծապէս ձեռնտու եղաւ Գրիգորիսի յաջողութեանց: Այլ երբ ծագեցան Խոսրովու վերջին տարիներու խռովութիւնները և Սանատրուկ ալ հիւսիսային ապստամբութեան գլուխ կանգնեցաւ, կովկասաբնակ ազգերն ալ իրեն միացուց, և ինքզինք թագաւոր հռչակեց, և Պարսից հետ ալ բարեկամացաւ, Սանատրուկի և Գրիգորիսի յարաբերութիւնները խանգարուեցան:

Գրիգորիս՝ Վրթանէսի զաւակ և Լուսաւորչի թու, չէր կրնար համաձայնիլ Սանատրուկի ապստամբութեան, և հետեւաբար իւր կողմանէ զանց չէր ըներ Հայոց գահուն հաւատարմութեան դատը զօրացնել: Ինչպէս որ նմանօրինակ զիպուածներու մէջ կը հանդիպի, Գրիգորիս Սանատրուկի աչքին իրեն հակառակորդ և թըշ-



նամուոյն բարեկամ, և իբր մատնիչ երեցաւ: Խորե-  
նացին Գրիգորիսի նահատակութիւնը կը վերագրէ «գա-  
ւելոյ նորին Սանատրկոյ և այլոց ոմանց հանապազա-  
սուտ արանց Աղուանից» (Եր. 6): Այսչափն ալ կը բա-  
ւէ ցուցնել թէ ինչ եղաւ Գրիգորիսի մահուան շար-  
ժառիթը. Վրթանէսի դէմ եղած դաւաճանութիւնն ևս  
տեսանք վերը, որ հարկաւ հարաւակողման ապստամ-  
բութեան պետին Բակուրի սագրանօք եղած էր:

Բուզանդ մանրամասն պարագաներ ևս կը պատմէ-  
Գրիգորիս, կըսէ, եկաւ Մազքութների բանակը և ներ-  
կայացաւ Արշակունի Սանեսանին, որ քաղաքական ապս-  
տամբութեան կրօնականն ալ միացուցած էր և քրիս-  
տոնէութիւնը թողած: Գրիգորիս սկսաւ աւետարան  
քարոզել Մազքութներուն, սոքա զննեցին Գրիգորիսի  
աւետարանը և տեսան որ կարգելու յափշտակել, աւա-  
րել և կոտորել, և հետեցուցին թէ Հայոց թագաւորին  
գործն է «զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խա-  
փանեսցէ զմեր արշաւանս» (Բուզ. 14): Եւ աստի գրը-  
գուելով Գրիգորիսը սպաննելու որոշումը կուտան:  
Եթէ նկատեմք թէ Մազքութներու թագաւոր Սանե-  
սան Արշակունին, Գրիգորիսի երբեմն պաշտպան Սա-  
նատրուկ Արշակունին է, որ ապստամբութենէ յետոյ  
Գրիգորիսը իբր Հայոց թագաւորին բարեկամ և իրեն  
թշնամի կը կարծէ, շուտով կը պարզուի այդ վիպա-  
կան ոճին ներքև պարունակուած պատմական ստու-  
գութիւնը:

Ինչ ալ ըլլայ սպանութեան քաղաքական շարժա-  
ռիթը, յայտնի է թէ բուն ներքին պատճառը Գրիգո-  
րիսի քրիստոնէութիւնն էր, զոր կուղէին հարուածել  
Սանատրուկի ուրացութիւնը, Կովկասի ազգերուն հե-  
թանոսութիւնը և Պարսից ազդեցութիւնը: Մարտիրո-  
սութիւնը կարի խուժուժ կերպով գործադրուեցաւ:

վասն զի բարբառոսական ճաշակով մը «կալան ձի ամե-  
հի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագւոյ  
ձիոյն, և արձակեցին... ի գաշտն Վատնետայ» (Բուզ.  
15), որ կը գտնուի Կուր գետի բերանը, Կասպից ծո-  
վուն եզերքը: Գրիգորիս շուրջ 42 տարեկան եղած էր  
նահատակութեան ատեն:

Գրիգորիսի մարմինը իւր սարկաւազներուն ձեռ-  
քով ամփոփուեցաւ և բերուեցաւ Փոքր Սիւնիք, և  
թաղուեցաւ Ամարաս գիւղին մէջ, ուր յետոյ վանք ալ  
շինուեցաւ, որ փոքրիկ բայց շէն վանք մ'է մինչև  
ցայսօր: Ս. Գրիգորիսի նշխարք յայտնուեցան անգամ  
մը 489-ին Վաչագան Աղուանից թագաւորին ժամա-  
նակ, որոյ տօնն կը կատարեմք Խաչի հինգերորդ եր-  
կուշաբթին, իսկ բուն տօնը կը կատարուի իւր հօր և  
եղբոր և հօրեղբոր հետ, որդւոց և թոռանց յիշատա-  
կին: Գրիգորիսի գերեզմանը նորէն անյայտ մնալէ ետ-  
քը, վերստին յայտնուեցաւ վերջին ժամանակներու մէջ  
1858-ին, և մինչև այսօր կը պատուուի Ամարասի վան-  
քին մէջ:



## Տ. Ս. ՅՈՒՍԻԿ ՊԱՐԹԵԻ

## 7. ԿԼԹՈՂԻԿՈՍՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ

Վրթանէսի մահուանէ իբր 5 տարի առաջ նահատակուած էր Գրիգորիս, այնպէս որ Լուսաւորչի սերունդէն միայն Յուսիկ կար որ կարող էր հայրապետութեան կոչուիլ: Յուսիկ Վրթանէսի երկուորեակներուն երկրորդն էր, ծնած էր Կեսարիա 295 ին, նոյն իսկ անունը՝ թէպէտ հայկական ձևի վերածուած, բայց միշտ կը լիշեցնէ մեզ Ս. Հիւսիքոս վկային անունը, որ յատուկ եկեղեցի և պաշտօն ունէր Կեսարիոյ մէջ: Հօրը հետ եկած էր Հայաստան 306 ին, ինչպէս ըսինք, և արքունիքէ մէջ եղբօրը հետ առաջին ուսմունք և կրթութիւն առնելէ յետոյ, երբ Գրիգորիս կրօնաւորութեան մտաւ, Յուսիկ պալատական եղաւ և արքայօրդի Տիրանին տան մէջ ապրել սկսաւ: (Բուզ. 10):

Տիրան արքայօրդի կը կոչուի այդ պատմութեան մէջ և Խոսրով թագաւորի որդի. թէպէտ այն թուականին տակաւին կենդանի էր Տրդատ և կը թագաւորէր, որով Խոսրով տակաւին արքայօրդի էր, իսկ Տիրան լոկ արքայաթոռ կրնար ըլլալ: Հաւանական է ըսել արքայաթոռն ալ կրնար արքայօրդի կոչուիլ իբրև արքայազուն իշխան. սակայն շատ յարմար է ընդունել միև կարծիքն ալ որ կըսէ թէ Տրդատի ծերութեան և տկարութեան պատճառով, Խոսրով իւր հօր կենդանութեան ատեն կիշխէր իբրև գահակից թագաւոր: Ուրիշներ պարզապէս անուններու շփոթութիւն մը ուզեցին ենթադրել, իբրև թէ Խոսրով գրելու կամ ընդօրինակելու

տեղ Տիրան գրուած ըլլայ. զիտելով մանաւանդ որ այն թուականին տակաւին Տիրան տունտեղ ունենալու տարիքին չէր կրնար հասած լինել: Այդ մեկնութիւններէն որն և նախագասուի պատմութեան իսկութիւնը չը փոխուիր, այլ մեք կը նախընտրեմք Խոսրովը գահակից թագաւոր ընդունել:

Յուսիկ տակաւին նորահաս պատանի Տիրանի փեսայ կը լինի և կամուսնանայ անոր աղջկան հետ, որոյ անունը չէ յիշուած: Ոմանք կարծեցին թէ Յուսիկի կինը Տիրանի քոյրն է, և ասով ուզեցին լուծել այն դժուարութիւնը զոր Յուսիկի հարստըուն վրայ խօսած ատեննիս պիտի տեսնենք. այլ Բուզանդ շատ յայտնի կըսէ թէ Տիրանի դստեր հետ ամուսնացաւ, և մեք ստիպողական հարկ մը չեմք տեսներ պատմիչին խօսքերը փոփոխելու: Իսկ Յուսիկի ամուսնութեան պարագաներուն վրայ խօսելով Բուզանդ կըսէ նախ թէ «յամուսնանալն բանադատեցաւ ի թագաւորէն իբրև զմանուկ». յետոյ կը յարէ թէ «յամուսնում գիշերին յղացաւ կինն». թէ Յուսիկ «ետես ի տեսեան զի երկու էին մանկունքն և ոչ հօճոյ ի պաշտօն Տեառն», և թէ Յուսիկ «այլ ոչ ևս մերձեցաւ ի նա», և թէ «յերկոտասանամենից ի վեր առաքինանայր» (Բուզ. 10—12): Այդ լիշատակութեանց յենլով պէտք է ըսել թէ Յուսիկ գրեթէ 10 տարեկան ամուսնացաւ, և որչափ ալ այն ժամանակներ տարիքի շատ մտադրութիւն չէին դարձներ, սակայն 10—11 տարեկան պատանիի զաւակ ունենալը չկրնար հաւատալի ըլլալ, և հետևաբար գոնէ 15 տարեկան պէտք է ենթադրել Յուսիկը իւր երկուորեակները ունեցած ատեն, որ է ըսել 310 ին: Յուսիկի տղայքը կոչուեցան Պապ և Աթանազիսէ. Պապ անունը այժմ հայկական գաւառներու մէջ կը գործածուի իբր կրկնումն պապենական անունին, այլ չեմք պնդեր թէ չորրորդ դարու մէջ ալ



այսպէս եղած լինի. իսկ Աթանազինէ անունը ծանօթ է Լուսաւորչի հետ ազգականութեամբը և նշխարաց փոխադրութեամբը և Ս. Կարապետի վանքին մէջ գետեղուելովը:

Յուսիկի ամուսնական կեանքը կարճ եղաւ. որովհետեւ գրուած է թէ շուտով ձանձրացաւ թագաւորական տան փեսայութենէն, և թէ փոխադարձաբար «թըշնամացեալ էր տունն թագաւորին ընդ նմա» (Բուզ. 12). մինչև որ «մեռաւ կին նորա... և ազատեալ լինէր Յուսիկ ի յաներոյն» (Բուզ. 12): Ըստ պատմչին Յուսիկի ցաւը իւր զաւակներուն ապագայ անառակութիւնն էր և եկեղեցական կոչումին դժկամակութիւնը, այլ եթէ միայն այդ լինէր արքունիքին հետ հակառակելու և թագաւորին հետ թշնամանալու պատճառ չկայր. ուստի պէտք է ընդունել թէ ընտանեկան աւելի կարևոր պատճառներ խանգարեցին փեսային և աներին լաւ յարաբերութիւնները:

Բուզանդ կը պատմէ դարձեալ թէ Յուսիկ ուրիշ տեսիլքով մը վստահութիւն ստացաւ Աստուծոմէ թէ իւր որդւոց սերունդներ պիտի մտնեն աստուածային ծառայութեան, և պիտի լինին «սիւնք եկեղեցւոյ և մատակարարք բանին կենաց, և հիմունք հաւատոյ և պաշտօնեայք Քրիստոսի, և արբանեակք Հոգւոյն սրբոյ». որք դժուարութեանց ալ հանդիպելով «կայցեն ի հաւատս անշարժ իբրև զվէմ»: Այդ խօսքեր յայտնապէս Ներսէսի և Սահակի կականարկեն, որոց վրայ հոգևոր տեսութեամբ մխիթարուեցաւ Յուսիկ, և «զամենայն աւուրս կենաց իւրոյ գոհանայր և եթ յամենայն ժամ անդադար» (Բուզ. 12 - 13):

Անծանօթ կը մնայ մեզ բոլորովին թէ ինչ եղաւ Յուսիկի կեանքը արքունիքի հետ թշնամանալէն մինչև կաթողիկոսանալը: Եկեղեցականութեան մտած լինելուն

նշան չկայ, արքունիքի ծառայելը ենթադրելի չէ, ուրեմն կը մնայ հետեցնել թէ առանց պալատականի յարաբերութիւնները խզելու քաշուած կեանք մը անցուց բոլորովին հոգևոր գործերու զբաղեալ և բարոյական բարեկարգութեան սաստիկ նախանձախնդիր:

#### 8. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Երբ Աթանէս մեռաւ և Լուսաւորչի սերունդէն հոգևոր գլուխ ունենալու գաղափարը նորէն արծարծեցաւ, Տիրան դժուարութիւն չտեսաւ իւր փեսային կաթողիկոսանալուն մէջ, ինչչափ ալ ներքին յարաբերութիւնին կանուխէն պաղած լինէր: Յուսիկ, որ արդէն 47 տարեկան էր, հրաւիրուեցաւ հայրապետական աթոռը, և Բուզանդի խօսքով «ըստ սովորութեան օրինակի» (եր. 29), շքեղ փառքով և արքունական զարդերով, մեծ հազարապետին և 12 նախարարներու ընկերակցութեամբ տարուեցաւ Կեսարիա ձեռնադրուելու համար: Զեռնագրութենէ դառնալուն Տիրան թագաւոր Տափերական կամուրջին վրայ դիմաւորեց նորապսակ կաթողիկոսը և կաթողիկէն առաջնորդեց և հայրապետական աթոռին վրայ նստեցուց: Յուսիկ կաթողիկոս էր, արքայազարմ սերունդէ էր, և թագաւորին փեսան էր, ուրեմն արքունական պատիւներ արդարացի էին իրեն:

Յուսիկին Կեսարիա երթալուն վրայ Խորենացին բան չըսեր, բայց մեք չեմք ուզեր հակառակել Բուզանդի պատմածին, որովհետև կը մտածեմք թէ Յուսիկ եպիսկոպոսական ձեռնադրութիւն չունէր, գուցէ քահանայութիւն ալ չունէր, և այսպիսի բացառիկ պարագայի հանդէպ ուզած են բացառիկ նշանակութիւն մը տալ ձեռնադրութեան, ինչպէս եղած էր յառաջագոյն իւր պապին՝ Լուսաւորչին համար, և ինչպէս եղաւ յետոյ իւր թոռին



Ներսէսի համար: Կեսարիոյ արքեպիսկոպոսին անունը յիշուած չէ, այլ թուականը պէտք է ղնել 342 ին:

Յուսիկի կաթողիկոս եղած ատենուան արտաքին նկարագիրը այսպէս կը գրուի. «Աւուրբք մանուկ, տիօք առոյգ, և բարձր հասակաւ, գեղով երեսոց սքանչելի և չքնաղ, զի այլ ոչ գտանէր նման նմա ի վերայ երկրի» (Բուզ. 30): Առհասարակ Լուսաւորչի ազգատոհմը, ինչպէս անուամբ նոյնպէս և կերպարանքով ալ պարթեւ և վայելուչ անձեր եղած են, զի միեւնոյն նկարագիրը Ներսէսի վրայ ալ կրկնուած կը գտնեմք (Բուզ. 69): Իսկ Յուսիկի մանուկ կոչուելը, զոր կը սիրէ լեզեղել Բուզանդ, պէտք չէ անտիական և անչափահաս երիտասարդ իմանալ, զի Բուզանդարանի մէջ մանուկ կոչումը շատերու կը տրուի, թէպէտև տարիքնին ընդհանրապէս 40 է վեր է: Միւս կողմանէ ժամանակագրութեանց և ծնունդներու խիստ և ճիշտ հաշիւը 47 տարի կուտայ Յուսիկի, իսկ այս տարիքին մէջ մանուկ կը նկատուի անոր համար, որ իրմէ առաջ կաթողիկոսներ առջևս ծերեր էին: Միւս կողմանէ թագաւորի փեսայ լինելն ալ, թագաւորին աչքին իբրև զաւակ և իբրև տղայ սեպուելուն կը նպաստէր:

Յուսիկի կաթողիկոսութեան ժամանակէն որոշ զիպրուածներ և պատահարներ հասած չեն մեզի: Ընդհանուր կերպով իւր նկարագիրը կը կազմեն արթուն և գործունեայ, խրատող և յանդիմանող, նախանձայոյզ և անաչառ պաշտօնէր մը ձիրքերը: Լուսաւորչի սերունդը իր սրտին մէջ բարձր դիրք մը կը զգայր նոյն իսկ արքունիքի հանդէպ, և քաղաքական գործերու քննութիւնն ու գատատանն ալ իրեն օտար չէր նկատեր: Գրիգոր և Արիստակէս այդպէս ըրած էին, Վրթանէս ալ նոյնպէս, մանաւանդ քաղաքական գործերու մէջ ունեցած յատուկ յաջողակութեամբը: Յուսիկ

ալ նոյն ոճին հետեցաւ. բայց ինչ որ Վրթանէսի տարիքը ու դիրքը զիւրատար կրնէին, Յուսիկի տարիքին և դիրքին ներքի չերևցան: Յուսիկ իւր հոգևորական պաշտօնին պահանջը արտաքին ակնածութիւններէ գերազանց դասեց և նախանձայոյզ խտուրթիւնները շարունակեց: Մտքի բարձրութիւնն ալ ունէր, զի «դպրութեան գրոց սրբոց արուեստաւն լի էր» (Բուզ. 31): Արգեօք արքունիքի հետ յառաջուց ունեցած դաւնացեալ զգացումները դեր մը ունեցան իւր ընթացքին մէջ. — ենթադրել արժան չեմք սեպեր:

Տիրան և իւր նախարարները քրիստոնէական կատարելութեանց բնաւ հետամուտ չէին. մանաւանդ թէ հին հեթանոսական սկզբունքներուն կը հետևէին մէկ կողմէն անառակութեան, միւս կողմէն բռնութեան գործեր սովորական էին իրենց, մինչ Յուսիկ կաշխատէր այսպիսի անտեղութիւնները իսկոյն արմատախիլ ընել (Բուզ. 34—35), և երբ խրատի և յանդիմանութեան անպտուղ մնալը կը տեսնէր, վերջին միջոցներու կը դիմէր. «Արգելոյր զթագաւորն և զմեծամեծսն չտալ թոյլ մտանել լեկեղեցին: Արգ ելեալ կապէր մեծապէս պատուհասիւք քահանայական իշխանական բանիւ յանդիմանութեան» (Բուզ. 31): Այդ խօսքեր բաւական յատուկ կերպով կը ցուցնեն թէ Յուսիկ բանադրած և նզոված է թագաւորն ու նախարարները և եկեղեցի մտնելու իրաւունքէ զրկած: Թերևս յատուկ պարագայ մ'ալ առիթ տուաւ այդ եկեղեցական պատիժը վճռելու, որ մեզի անձամօթ մնացած է: Իժբաղդաբար թէ Տիրան իւր փեսային՝ և թէ նախարարները հոգևորականի մը վճռոյն մեծ կարևորութիւն տուած չեն:



## 9. ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Անգամ մը Տիրան և Յուսիկ միասին կը գտնուին Ծոփաց նահանգին Բնաբեղ կոչուած արքունի բերդին մէջ: Հանգիսի օր մը, «օր մի յաւուրց տարեկան», արքունիքն ալ կուզէ եկեղեցույ հանդիսութեան ներկայ լինել. «Իմեաց գալ թագաւորն Տիրան հանդերձ այլովք աւագանւովն մտանել յեկեղեցին»: Յուսիկ կը լսէ և անձամբ եկեղեցույն դուռը ելնելով կընդդիմանայ ու կըսէ. «Ձեռ արժանի. հիմ գաս, մի գար ի ներքս»: Արգելքը թագաւորին հետ նախարարներուն ալ ուղղուած է հարկաւ, վասն զի բանադրանքն ալ ամենուն համար էր:

Տիրան կը զայրանայ երես առերես նախատանքին համար, բայց աւելի կը կատողին նախարարներ, և բռնութիւնը բռնութեամբ վանելու վարժութեամբ, իրենք և իրենց մարդիկներ կը յարձակին հայրապետին և պաշտօնէից վրայ: Եկեղեցույ դրան առջև և դուռնէն ներս ահագին ժխոր մը կսկսի, և ամեն հարուածներ հայրապետին դէմ կուղղուին, մինչև որ «բրածեծ եղեալ, ջաղջախեալ, կիսամահ կոշկոճեալ ընկեցեալ լինէր» սուրբ կաթողիկոսն Յուսիկ (Բուզ. 32), որ սակայն նոյն տեղ չէր մեռներ:

Հայրապետանոցին և եկեղեցույն պաշտօնեաները հազիւ կընան տէր լինել հարուածեալ հայրապետին անձին, և առաջին խնամքները նոյնտեղ տալէն յետոյ, անշուշտ թագաւորին և նախարարաց ատելութեան և հեռացնելու համար Ծոփաց գաւառի Բնաբեղ նէ ալ հեռացնելու համար Ծոփաց գաւառի Թորդան դղեակէն կը փոխադրեն Գարանաղի գաւառի Թորդան գիւղը՝ Լուստուրչի ցեղին սեփական կալուածը: Բայց խնամքները արդիւնք չեն ունենար որովհետև վտանգաւոր էր Սրբոյն վիճակը: Յուսիկ հայրապետ «անդ»

ոչինչ լետ բազում աւուրց հանգեալ, և Թորդանի հայրենական դամբարանին մէջ թաղուեցաւ Գրիգորի և Վրթանէսի մօտ:

Յուսիկի հայրապետութեան տևողութիւնը Խորենացի 6 տարի կը դնէ (եր. 30), և պատճառ մը չունիմք այդ թիւը փոփոխելու, մանաւանդ որ պէտք է որ պատմութեան պահանջին համեմատ Յուսիկի հայրապետութեան սկիզբն ալ վերջն ալ Տիրանի թագաւորութեան ժամանակին մէջ ամփոփուի: Հետեւաբար Յուսիկի մահուան թուականը պէտք է դնել 347-ին, և այս թուականը կը պատասխանէ բովանդակ պատմական պահանջներուն: Յուսիկ նահատակուած է ուրեմն 53 տարեկան եղած տանն:

Խորենացին Յուսիկի նահատակութեան պատճառ կը ցուցնէ Յուլիանոսի պատկերին խորտակման պարագայն, որ ընդհանուր ընդունելութիւն ալ գտած էր երբեմն, և Լամբրոնացին շարականի մէջ ալ անցուցած է, ինչպէս որ մինչև ցայժմ կերգեմք. «Քաջութեամբ զանօրինաց խորտակեալ զպատկերսն տէր սուրբ Յուսիկ». թէ և *անօրինաց և զպատկերսն յոգնակի ձեերը մէկ Յուլիանոսին մէկ պատկերէն աւելի այլաբանական Լամբրոնացին աւանդութիւնը և այլաբանութիւնը իրարու միացնել ուզած է: Ինչ և իցէ Յուլիանոսի պատկերին պարագայն այլ ևս իբրև պատմական չկրնար ընդունուիլ, և միաձայնութեամբ մէկկողմ թողուած է քննադատ պատմագիրներէն: Ոչ միայն ժամանակագրական ուղղութիւնը կը պահանջէ որ 342-էն 347 կաթողիկոսութիւն վարող Յուսիկը երբէք ժամանակասի, այլ և Բուզանդի պատմութիւնը զայն բացայայտ կը հաստատէ բնաւ Յուլիանոսի անուն կամ պատկերի*



յիշատակութիւնն չխառնելով Յուսիկի նահատակութեան մէջ. և լեռոյ Յուլիանոսի ժամանակակից զնելով Արշակը: Այս զիտողութիւնն ալ միայն նորերու գիւտը չէ. զի նոյնինքն Սամուէլ Անեցի (եր. 66) Յուսիկի սպանութիւնը կը զնէ ՅԿԿ=364-ին, իսկ Յուլիանոսի թագաւորելը ՅԿԸ=368-ին: Իրաւ Սամուէլի այդ թուականներ ևս ուղղելի են, այլ մեզ կը բաւէ նկատել որ Յուսիկի վկայութիւնը կապ չունի Յուլիանոսի պատկերին հետ:

Յուսիկի մահուան ձևին մէջ ալ կը տարբերի Խորենացին երբ կըսէ թէ Տիրան «հրամայեաց ջալստիւք հարկանել յերկար մինչև ի գանելն աւանդեաց զողին» (եր. 30): Այս խօսքերով կենթադրուի թէ Տիրան՝ կաթողիկոսը դատի ենթարկած լինի, գատապարտած, պատիժը որոշած, գահիճներու յանձնած, և պատժոյն գործադրութեան մէջ սպաննած: Չեմք կարծեր որ քրիստոնեայ թագաւոր մը կարողանայ այսպիսի ընթացք մը ունենալ կաթողիկոսին անձին վրայ, և ոչ ալ աներ մը իւր փեսային վրայ, այլ շատ լաւ կը մեկնուի սպանութիւնը եթէ նկատուի այն իբրև թագաւորին կամքէն անկախ պատահար մը, զինուորական ժխորի մէջ տեղի ունեցած, թէպէտև Տիրան սիրտէն ուզած ալ լինի որ կերպով մը ազատի փեսայ կաթողիկոսին նախանձայնոյ ընթացքէն: Մինչև իսկ պէտք է ընդունել թէ Տիրան հարկաւ Թորդան ալ դացած կը լինի, Յուսիկի գերեզմանը կեղծաւորաբար պատուելու:

#### 10. Ս. ԴԱՆԻԷԼ ԱՍՈՐԻ

Ամէն բան վերջանալէն ետքը կարգը կուգայ հայրապետութեան յաջորդութիւնը հոգալու, և որովհետև ազգին փափաքն էր Լուսաւորչի ցեղին հետ կապուած մնալ, Տիրան ալ կը հաւանի Յուսիկի զաւակներէն և իւր

թոռներէն մէկը աթու բարձրացնել: Պապ և Աթանագինէ իբր 37 տարեկան անձեր են և արդէն ամուսնացած, Պապայ կինն է Վարազդուխտ և անորդի է. Աթանագինէի կինն է Բամբիշ և զաւակ մ'ալ ունեցած է ներսէս անունով, որ մօտ 20 տարեկան է և Բիւզանդիոն կը դանուի: Բիւզանդ ոչ միայն Վարազդուխտը և Բամբիշը իրարու քոյրեր կ'ենթադրէ, այլ և թագաւորին ալ քոյրեր լինելնին կը պատմէ. «Առին իւրեանց կանայս զքորս թագաւորին» (Բուզ. 44), և ուրիշ տեղ ալ ներսէսի մայր Բամբիշը թագաւորի քոյր (Բուզ. 49) և Տիրանի քոյր (Բուզ. 69) կը կոչէ: Այսպիսի ազգակցութիւն մը բոլորովին անհնար կերևի, ոչ թէ ճիւղահամարի զժուարութեանց համար, որուն ժամանակին արքունիքը բնաւ մտադրութիւն զարձուցած չէ, այլ նոյն իսկ բնական անկապակցութեան և տարիքներու անյարմարութեան համար, որ Պապ և Աթանագինէ որ Տիրանի թոռներն են իրենց մեծ մօր տեղը եղող կիներուն, այսինքն իրենց մեծ հօր քոյրերուն հետ կարենան ամուսնու համար բնաւ նշան մը չեմք գտնել, և միայն ենթադրութեամբ կրնամք ըսել թէ Վարազդուխտ և Բամբիշ Տիրանի եղբոր կամ քրոջ զաւակներ եղած ըլլան, առանց հարազատ քոյրեր ալ լինելու:

Երբ Յուսիկի զաւակները անհնար եղաւ եկեղեցականութեան համոզել, միտքեր գարձան Լուսաւորչի հոգևոր զաւակի մը վրայ, որ է Դանիէլ Ասորի, Լուսաւորչի շատ մօտիկ անձ մը, և ժամանակին անոր հիւպերեզը կամ փոքրաւորը եղած (Խոր. 30), և անոր ձեռնադրութեամբ մինչև քորեպիսկոպոսութիւն բարձրացած (Բուզ. 37), և որուն պաշտօնն էր Լուսաւորչեան տոհմին կալուածներուն տեսչութիւնը, և անոնց մէջ գրանուած եկեղեցիներու վերակացութիւնը առանց վիճա-



կաւոր հովուութեան, և առանց հաստատուն թեմ մը ունենալու, որ Հացեաց Գրախտի վանքին մէջ ճգնաւորութեամբ կապրէր և մերթ ընդ մերթ անկէ ելնելով Տարոն և Եկեղեաց գաւառները կը շրջէր, նկատելով որ Գանիէլ միշտ «ճերուհի երէց» (Խոր. 30), կամ «ճերուհի քորեպիսկոպոս» (Բուզ. 36) կը կոչուէի, և Լուսաւորչի ժամանակէն գործի գլուխ գտնուած է, հարկ կը լինի որ 347 ին, գրեթէ 80 տարեկան անձ մը եղած լինի:

Երբ Գանիէլը կաթողիկոս ընելու խորհուրդը ընդունուեցաւ, պատուով և նախարարներու ընկերակցութեամբ Եկեղեաց գաւառի Թիւ գիւղէն ուր այն ատեն կը գտնուէր, բերուեցաւ Աղձնեաց նահանգի Բառաէջ զղեակը ուր գացած էր Տիրան: Բայց Գանիէլ այսպիսի ցոյցերով չչլացաւ, և փոխանակ իրեն ցուցուած պատիւներուն շնորհակալ ըլլալու, իսկոյն յանդիմանութեան սկսաւ: Մի առ մի սկսաւ յայտնել արքունիքի և նախարարներուն ապօրինի գործերը, և անոնց երեսը զարկաւ գործուած անիրաւ սպանութիւնները, և աւելի ևս ծանրացաւ Ս. Յուսիկ հայրապետի մահուան վրայ, և նոյն իսկ Յուսիկէ աւելի սկսաւ ծանրացնել թագաւորին և նախարարներուն վրայ զրուած եկեղեցական վճիռը: Ապա համարձակաբերան կերպով աստուածալին վրէժխնդրութիւնը հրաւիրեց ազգին վրայ դառնութեամբ և անէճքներով լեցուն. «Այս ամենայն լինելոց է ձեզ, զի այսպէս եցոյց ինձ Տէր»: Իսկ իրեն առաջարկուած կաթողիկոսութեան վրայ խօսելով, մերթեց զայն անարգանօք. «Զիարդ կայցեմ գլուխ ազգի՝ զորս եթող Տէրն ի ձեռանէ» (Բուզ. 42): Բուզանդ ընդարձակ կերպով յառաջ կը բերէ Գանիէլի անիծակուր յանդիմանութիւնները (Բուզ. 39—42), կարծես խնդալով Հայ ազգին չարեաց վրայ:

Տիրանի բարկութիւնը չափ չունեցաւ, «և ի դառ-

նութեան ցանձան իւրոյ հրաման տայր խեղդամահ առնել զնա» (Բուզ. 42): Աւագանիներէն շատեր ջանացին հրամանը ետ ընել տալ, այլ դահիճներ գործադրութիւնը փութացուցին, «և ճոպան ի փողս եղեալ խեղդամահ արարին» ճերուհի Գանիէլը: Այս տեղ այլ ևս Յուսիկի մահուան պէս ժխորի մէջ կատարուած սպանութիւն մը չեմք գտներ, այլ ուղղակի թագաւորի հրամանով կատարուած բռնական և պատժական սպանութիւն մը: Սակայն տարբերութիւններն ալ ակնյայտնի են, Գանիէլ Յուսիկի պէս կաթողիկոս մը և եկեղեցական իշխանութեան պետ մը չէր կրնար նկատուիլ ու պատկառանք ազգել, այլ կը նկատուէր իբրև զրպարտիչ մը որ Յուսիկի մահուան պատասխանատուութիւնը Տիրանի վրայ կը դնէր, և իբրև ստորի մը որ հայ ազգը կը նախատէր և կանիծէր. և այս կերպով միայն կըրնայ մեկնուիլ Տիրանի բարկացալտ և յանկարծական ընթացքին և հրամանին բուն պատճառը:

Գանիէլի մարմինը իւր Շաղիտա և Եպիփան աշակերտներուն ձեռքով, և արքունական գունդին մէջ զբանուող պաշտօնեաներու գործակցութեամբ (Բուզ. 43), և ընկերակցութեամբ ժողովրդական բազմութեան, փոխադրուեցաւ Բառաէջ զղեակէն Հացեաց Գրախտ կոչուած մենարանը, որ Յուլ լերան ստորտը կը գտնուէր և Գանիէլի սեփական ճգնարանն էր: Գերեզմանը կը գտնուի այժմ Պուլանըի գաւառը, որ է նախկին Հարբ գաւառը, Կոփ գիւղի մօտ, պզտիկ ձորակի մէջ առանձինն մատուռով, սրունքով շինուած է Կոփայ Ս. Գանիէլի վանքը, իւր անուան նուիրուած:

Ոմանք Գանիէլի անունը կաթողիկոսներուն շարքը կանցնեն, այլ քանի որ ոչ ընտրութիւն չըացաւ, ոչ ասթու ելաւ և ոչ պաշտօնի ձեռնարկեց, Գանիէլի անունը հայրապետական գաւազանին մէջ չկրնար դրուիլ: Իսկ



իբրև Լուսաւորչի հոգեւոր զաւակ իւր տօնը կը կատարուի Լուսաւորչի երկու զաւակներուն և երկու թոռներուն տօնին հետ միասին:

Դանիէլի մահուամբ նորէն կաթողիկոսութեան խնդիրը ձեռք առնուեցաւ, և վերստին բռնադատութիւն եղաւ Յուսիկի երկու զաւակներուն եկեղեցակա-նութեան մտնելու համար, մինչև իսկ եպիսկոպոսներու ձեռքով բռնի սարկաւագ ձեռնադրուեցան (Բուզ. 44): Բայց նոքա սարկաւագ ըլլալէ յետոյ ալ իրենց զինու-բական կեանքը և աշխարհական կենցաղը չթողուցին: Թերևս Աթանազիսէի որդին քսանամեայ երիտասարդ ներսէսն իսկ կաթողիկոսութեան կոչուէր, Լուսաւորչի տոհմին սիրոյն համար, բայց ներսէս ալ բացակայ էր և Կոստանդնուպոլիս կը գտնուէր (Խոր. 34): Այդ վա-րանոյ գործերու պատճառով հայրապետական աթոռը տարիի մը շափ անառաջնորդ մնաց (Բուզ. 32), մինչև յաջորդ 348 թուականը:

## Տ. ՓԱՌԷՆ ԱՇՏԻՇԱՏԵՅԻ

### 11. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ

Երբ Լուսաւորչի սերունդէն կաթողիկոս ունենա-լու հնարաւորութիւնը դադրեցաւ, գոնէ Լուսաւորչէն բոլորովին չհեռանալու համար համաձայնութեամբ ուրոշեցին. «զի ի նմին տանէ իշխանութեան Գրիգորի գացեն, որ կալցի նա զաթոռ հարցն», և այս սկզբուն-քով «համարեցան արժանի զՓառէն ոմն երէց» (Բուզ. 44): Այդ խօսքեր մեզ իրաւունք կուտան հետևեցել թէ Փառէն Լուսաւորչայ անմիջական աշակերտներէն և իրեն մօտիկ անձերէն էր նման Դանիէլի, որ իրմէ առաջ կաթողիկոսութեան արժանի դատուած էր: Հե-

տեաբար Փառէն յոյժ ծեր անձ մ'էր, որ կը հաստա-տուի նաև քիչ տարի ետքը խաղաղութեամբ վախճա-նելէն: Ինքն բնիկ հայագգի էր և Տարոնեցի, Աշտի-շատ գիւղէն, այսինքն «յԱշտիշատից Տարոնոյ» (Խոր. 34), որ սեփական կալուած էր Լուսաւորչեան տոհ-մին, և Փառէն այս կողմէ ալ կրնար ըսուիլ թէ էր «ի տանէ իշխանութեան Գրիգորի», իսկ իւր պաշտօնը Գլակայ Ս. Կարապետի վանահայրութիւնն էր, ըստ Բուզանդայ. «ի մեծէ մարգարէանոցէն Յովհաննու . . . զի տեղին այն նմա էր հաւատացեալ» (Բուզ. 44): Ի-րաւ ըստ Յովհաննու Մամիկոնեանի դարուս վանահայր-ները 302-է սկսելով դրուած են Ձենոբ 20 տարի և Եպիփան 30 տարի (Մամ. 7), որով կը հասնիմք մինչև 352, սակայն Եպիփան Դանիէլի աշակերտ էր և Պո-փոց երկրին մէջ ճշնող (Բուզ. 43 և 226) և ապա եղբայրանոցաց տեսուչներէն մին (Խոր. 44), և ոչ եր-բէք Ս. Կարապետի վանքին առաջնորդ, որով Մամի-կոնեանի ցուցակը ընդունելի չկրնար լինել:

Փառէնի անունը Խորենացին կը գրէ Փառներսէհ (եր. 34), իբր սղոմն Փառէն և Ներսէհ զոյգ անուն-ներու. և Խորենացւոյն հետեւողութեամբ վերջին ժա-մանակաց ցուցակներն ալ Փառներսէհ կը գրեն հայ-րապետիս անունը, սակայն մեք կը սիրեմք անունները իրենց պարզութեան մէջ պահել և Փառէն կոչել, ինչպէս կը կոչէ ևս Բուզանդ քանի անգամ որ առիթը հանդի-պի, թէ հայրապետին պատմութեան և թէ նորա որդւոյն Յովհան Եպիսկոպոսին պատմութեան մէջ (Բուզ. 274):

Բուզանդ Փառէնի համար ալ ձեռնադրութեան պատճառով Կեսարիա երթալը կը պատմէ, 14 նախա-րարներու ընկերակցութեամբ (Բուզ. 44), սակայն Խո-րենացի և ուրիշներ բնաւ այսպիսի լիշտակութիւն չեն ըներ: Բայց ուրիշ տեղ Խորենացին Շահակի վրայ



խօսած ատեն, «Առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու» (Խոր. 94), կաթողիկոս լինելը դիտել տալէն կըրնանք ընդունիլ թէ Կեսարիա երթալու սովորութիւնը կը պահուէր երբ ընտրեալը եպիսկոպոսական ձեռնադրութիւն չունէր: Հռովմայ աթոռոյն ընտրեալներն ալ հաստատուն կերպով Ոստիոյ եպիսկոպոսէն ձեռնադրութիւն կառնէին, ինչպէս Կոստանդնուպոլսոյ աթոռոյն ընտրեալներն ալ Հերակլիոյ աթոռէն. բայց ձեռնադրող աթոռներուն ենթարկեալ չէին, Հայոց աթոռոյն ընտրեալներն ալ Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն առնլու սովորութիւնը կրնային չարգել, առանց անոր ենթարկեալ լինելու:

Փառէն կաթողիկոսի գործունէութեան վրայ բառ մը անգամ չունի Խորենացին, իսկ Բուզանդ կը բաւականանայ ըսել թէ «զիւր անձն սուրբ պահէր». այլ վարչական կողմը շատ տկար կը ցուցնէ. «Չհամարձակէր նա կամ խրատել ինչ, կամ յանդիմանել զմոլորութիւն ինչ զուրուք կամ զամբարշտութիւնս, և ի հարկէ ընդերէր անօրէն թագաւորին և ըստ նորին կամայն երթեալ հնազանդէր» (Բուզ. 45): Որչափ ալ այդ ընթացքին մի մասը խոհական լուծեան վերագրեմք, սակայն միշտ կը մնայ տարիքով ծեր, նախընթացով վանական, և բնութեամբ տկար անձի մը վարչութիւնը, որ առանց զօրաւոր լինելու, կրնար սովորական կանոնաւորութիւնը պահել:

Փառէնի կաթողիկոսութիւնը յոյժ համառօտ եղաւ. Խորենացին միայն 4 տարի կուտայ (Խոր. 34), և զրեթէ ամենքը նոյնը կը կրկնեն: Յովհաննէս Պատմաբան 3 տարի կուտայ (Յովհ. 60), բայց հաւանաբար Գ և Գ թուանշան տառերու շփոթութեան արդիւնք է: Սամուէլ Անեցի 5 տարի կուտայ (Սամ. 66), բայց սա ալ կերեւի թէ Փառէնի մահուանէ ետքը առանց

կաթողիկոսի մնացած տարին Փառէնի վրայ կը հաշուէ, զի սովորական է ընտրութենէ ընտրութիւն հաշուել կաթողիկոսներու տարիները: Ուրեմն հաստատուն կը մնայ քառամեայ միջոց մը տալ Փառէնի կաթողիկոսութեան 348-էն 352: Իսկ իւր տարիքին գալով կանուխ և խաղաղութեամբ մեռնելն ալ խոր ծերութեան հասած լինելուն նշանակ է, ինչ որ նախընթաց ժամանակին մէջ Լուսաւորչի հետ ունեցած չարաբերութենէն ալ ցուցուած է:

Մահուան տեղը հայրապետական աթոռը պէտք է ենթադրել, այսինքն է Վաղարշապատ. վասն զի ուրիշ տեղ գացած լինելը բնաւ յիշուած չէ. իսկ մարմինը փոխադրուած է իւր առաջին կեանքին և առաջին պաշտօնին տեղը: Եկեղեցւոյ պաշտօնէութիւնը կը տանի զայն Տարոն և կը թաղէ «ի յագարափն մեծի մարգարէանոցին Յովհաննու» (Բուզ. 45), որ ըսել է Ս. Կարապետի եկեղեցիէն դուրս: Հին կանոններ կը պատուիրէին. «Մի ոք իշխեսցէ թաղել զգիս մերձ ի սուրբ եկեղեցիս, այլ արտաքս քառասուն քայլ» (Բարսղի. Գ. 135: Կան. 109): Անոր համար է որ պատմիչք խնամով կը լիշեն թէ թաղուեցաւ յագարափն, որպէսզի եկեղեցւոյ մէջ կամ եկեղեցւոյ որմոց ներքև չհասկացուի:

## 12. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԵՊՔԵՐ

Փառէնի ժամանակին դէպքերէն լիշատակութեան արժանի է Յուսիկի զուակնեղուն եղբրական մահը. իրաւցնէ չյոյժ ահագին և սարսափման լսողաց արժանի» (Խոր. 34): Պապ և Աթանաղիոսէ որ աշխարհասէր կենցաղնին կը շարունակէին, կը գտնուէին անգամ մը Աշտիշատ, որ իրենց հայրենական կալուածն էր (Բուզ. 117) և «բողոք և վարձակօք և գուսանօք և կատա-



կօք... ուտէին և ըմպէին» (Բուզ. 48), երբ կայծակ մը, կամ ըստ պատմչին «Տրեշտակ Տեառն ի նմանութիւն փայլատական», վրանին իջաւ և երկուքն ալ միանգամայն այրեց և մեռուց: Ներկաներ սարսափահար փախան և հազիւ ամիսներ անցնելէ յետոյ «ցամաքեալ և կճղացեալ», այսինքն է խանձողեալ մարմինները վերուցին և թաղեցին Աշտիշատի եկեղեցւոյն ագարակին մէջ: Աթանազիսն էի միակ օրինաւոր զաւակն է Ներսէս, իսկ Պապ ապօրէն զաւակ մը թողած է, Վրիկ անունով, Հացեկացի հարձէն եղած:

Աւելի նշանաւոր է Տիրանի արկածը, որ աչքերէն և թագէն միանգամայն զրկուեցաւ 350-ին: Խորենացիի պատմութեան համեմատ, Տիրան խարդախ բարեկամութեամբ Պարսկաստան հրաւիրուեցաւ, և այնտեղ կալանաւորուեցաւ և հրապարակաւ կուրացուեցաւ (Խոր. 38): Իսկ Բուզանդի պատմութեան համեմատ իւր ճարտուկ ճանձկէն ձին Ատրպատականի Վարազշապուհ մարզպանին չտալուն համար, Փիսակ Սիւնիի քսու-թեամբ զաւաճանուեցաւ: Վարազշապուհ 3000 զի-նուորով այցելութեան կուգալ Տիրանի Ապահունեաց գաւառի Աղիօսք գիւղը, Մասիոս լերան մօտ, և Տիրանը նենգութեամբ կը ձերբակալէ, Տալարի գիւղին մէջ կը կուրացնէ և այնպէս Շապուհ թագաւորին կը տանի: Թէպէտե երկու պատմութիւններ էականին մէջ շատ չեն տարբերիր, սակայն աւելի պատմական է Խորենացիին յառաջ բերած ձեւը, նկատելով մանաւանդ Տիրանին՝ Յոյներու օգնութեամբ և Պարսիկներու կամքին դէմ թագաւորութիւնը ձեռք անցնելու պարագայն:

Խորենացիի պատմածին համեմատ Շապուհ անմիջապէս Արշակը թագաւորեցուց Տիրանի տեղ և Հայերու օգնութեամբ Յոյներու դէմ արշաւեց (Խոր. 38): Իսկ ըստ Բուզանդայ Հայեր նախ Պարսից դէմ էջան, յետոյ՝

Յունաց զիմեցին և կայսեր օգնութեամբ, որ պէտք է լինի Կոստանդ, Պարսից յաղթեցին և խաղաղութեան ստիպեցին Տիրանը դարձնելու պայմանաւ, սակայն կուրացեալն Տիրան ազատութիւն ստանալով թագն ու իշխանութիւնը իւր Արշակ որդւոյն թողուց, և այս ալ հաստատուեցաւ Շապուհի կողմանէ (Բուզ. 54—58): Բուզանդի պատմածը աւելի հստակապէս և աւելի կապակցեալ է, թէև հնար է երկուքն ալ հաշտեցնել, որովհետև շատ հաւանական է, որ այս անգամ ալ ուրիշ առիթներու նման, թէ Յոյներ և թէ Պարսիկներ մաս մը նախարարներ ունեցած լինին իրենց հետ միևնոյն ժամանակ և իւրաքանչիւր կողմ իրեններով գործած:

Տիրանի արկածին վրայ խօսելով երկու պատմիչներն ալ անոր երկու աչքերուն խաւարիլը, եկեղեցւոյն երկու լուսաւորները Յուսիկն ու Գանիէլը խաւարցնելուն, այսինքն սպաննելուն կը բողոքատեն (Խոր. 38, Բուզ. 53): Սակայն չիշուիր բնաւ որ Փառէն կաթողիկոս այդպիսի նշանաւոր պարագաներու մէջ, որեւէ կրօնական կամ քաղաքական գործունէութեան կամ միջամտութեան նշան տուած լինի:

Տիրանի թագաւորութեան տևողութիւնը 11 տարի դրուած է Խորենացիէն (եր. 38), մեք ալ այս թիւը կը պահեմք 339 էն 350 թուականին պատշաճեցնելով: Արշակը թագաւորութեան անցած տտեն իբր 45 տարեկան պէտք է ըսել, և իբր կարող և գործունեայ անձ մը ճանչնալ: Իւր թագաւորութիւնը մեծաւ մասամբ զոյգ կընթանալ Ներսէսի կաթողիկոսութեան, և երկուքին պաշտօնավարութիւններն ալ թէ պատմական և թէ քննադատական շատ կէտեր ունին մտադրութեան արժանի: Փառէնի մահէն մինչև Ներսէսի ընտրութիւնը տարիէ աւելի միջոց մը կայ, և Բուզանդ միայն նոր կաթողի-



կոս մը կը գնէ այդ միջոցին համար. Եահակ ոմն անուն  
ի առճմէ գաւակին. Աղբիանոսի եպիսկոպոսին» (Բուզ.  
45), որուն ընտրութիւնը և ձեռնադրութեան համար  
Կեսարիա երթալն իսկ կը պատմէ: Իսկ Խորենացի և ա-  
մեն պատմագիրներ և ցուցակագիրներ համաձայն և հաս-  
տատուն կերպով Փառէնի և Ներսէսի մէջտեղ ուրիշ  
կաթողիկոս չեն ճանչնար և մինչև իսկ Ներսէսի վար-  
քին հեղինակը կրտէ. «Յայտ ամս լռեաց հայրապետութիւն  
Հայոց» (Վարք 14). հետևաբար մեք ալ այստեղ Եա-  
հակ կաթողիկոս մը չեմք կրնար ընդունել: Նոյն ինքն  
Բուզանդ որ նախ Եահակ կաթողիկոս մը կը գնէ, յե-  
տոյ գայն կը մտնայ, և առանց նորա մահը յիշելու և  
առանց դադարման պարագաները ցուցնելու, աթուր  
թափուր կը նկատէ, և կը պատմէ այս պատճառով ազ-  
գին ունեցած խեղճութիւնը և Ներսէսի բացառիկ կե-  
պով մը կաթողիկոս ընտրուելը (Բուզ. 94):

Պէտք է ուրեմն իբր ստույգ ընդունել թէ Փառէ-  
նէ ետքը աթուր իրօք թափուր մնաց, սակայն տևո-  
ղական պարապութեան նախատեսութեամբ Արշակ և ե-  
պիսկոպոսներ հարկ սեպեցին գլխաւոր մը ունենալ, ոչ  
իբրև աթուրակալ այլ իբրև տեղակալ, և այս եղաւ Բու-  
զանդի յիշած Եահակ եպիսկոպոսը: Տեղակալին պաշտօ-  
նը տարիէ աւելի տևեց, և այս տարին է որ յոմանց գու-  
մարուեցաւ Փառէնի կաթողիկոսութեան 4 տարիներուն,  
և Փառէնի 5 տարի տրուեցաւ: Սա ինքն Եահակն է որ  
ըստ միաձայն վկայութեան պատմչաց Ներսէսէ ետքը  
իրօք կաթողիկոս եղաւ:

Բայց Ներսէսի և իւր յաջորդներուն վրայ Աստու-  
ծով ուրիշ անգամ:





## « Լ ՈՒՄ Ա Յ »

գրական հանդիսից արտասպառած գրքեր

1. Իս. Յարութիւնեան. Ստեփաննոս Պալասանեան գ. 25 կ.
2. Պոտալէնիօ. Մի կտոր Տայ. թարգմ. Գ. ր. Աղանեանց գ. 10 կ.
3. Սենկելիչ. Գէպի Աթէնք. թ. Կ. ր. Աղանեանց գ. 15 կ.
4. Փաստիարակութեան զօրութիւնք. թարգմ. Ս. Վանդինեան գ. 30 կ.
5. Բակ. Կիլիկիա գ. 15 կ.
6. Մ. Տէր-Կարապետեան. Խաչատուր Աբովեան գ. 60 կ.
7. Անժամանակ թատրոն և ընթերցանութիւն. թարգմ. Ս. Վանդինեան գ. 25 կ.
8. Իս. Յարութիւնեան. Աշակերտի յուշատետրը գ. 30 կ.
9. Ստ. Աետիբեան. Աեկափարներ գ. 40 կ.
10. Պիստալոցցի. Լինճարդ և Գերտուգ. թարգմ. Իս. Յարութիւնեան գ. 1 ր. 50 կ.
11. Մեկրիսեղեկ եպիս. Մուրատեան. Պետրոս Հանդեպասկերով. գ. 50 կ.
12. Իս. Յարութիւնեան. Զգայմունքների աշխարհ գ.
13. Յար. Թումանեան. Մեկեր-Իւսուփ. պատմ. պօզմա գ.
14. Մ. Եօկայի. Աւրացոյր. թ. Ի. Յարութիւնեանց գ.
15. 1901. օ. Եջմիածնի ժՁ դարագարձը գ. 25 կ.
16. Եր. Շահագիգ. Մկրտիչ Էմին. գ. 60 կ.
17. Գ. ա. ր. Աղանեանց. Հրնից-նորից. ա. պրակ. գ. 30 կ.
18. Կարալէնիօ. Կոյր երաժիշտը. թարգմ. Վառչէ վարդապետ. գ. 60 կ.
19. Զօրրօրդ դարու Տայ եկեղեցին գ. 25 կ.
20. Երուանդ Շահագիգ. Նոր Նախիջևանի ա. Պաչ վանք գ. 40 կ.
21. Իս. Յարութիւնեան. Իմ օրագիրը. գ. 25 կ.



25